**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1-3/2020**
**24.12.2015թ. կնքված N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1-3 պետական գնման պայմանագրի**

**ք. Երևան** **« 20 » « 02 » 2020թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Հ. Բատիկյան, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԵՐԵՔ ԲՌՈՒՆՑՔ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Հարությունյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 24.12.2015թ. կնքված **NԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1-3** պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 4.1.1 և 7.3 կետերը և ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1919-Ն որոշումը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի 4.1 փոփոխել և շարադրել այն հետևյալ խմբագրությամբ.

«4.1 Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2020 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 32,035,500 (երեսուներկու միլիոն երեսունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում:
Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը,տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները»:

1.2 Հաստատել Համաձայնագրի 2020թ. Գնման Ժամանակացույցը համաձայն հավելված 1-ի:

1.3 Հաստատել Համաձայնագրի 2020թ. Վճարման Ժամանակացույցը համաձայն հավելված 2-ի:

1.4 Պայմանագրի 2.4 կետ կետը լրացնել նոր 2.4.4 ենթակետով և շարադրել այն հետևյալ խմբագրությամբ.

«2.4.4 Ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների ընթացքում ապահովել կազմակերպության ներկայացուցչի մասնակցությունը ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքի վայրում, անհապաղ տեղեկացնել պատվիրատուին դեպքի մասին, մասնակցել արձանագրության կազմմանը, հանդես գալ որպես կողմ պատվիրատուի անունից»:

1.5 Պայմանագրի 7-րդ «Այլ պայմաններ» բաժինը լրացնել նոր 7.10 և 7.11 կետերով և շարադրել դրանք հետևյալ խմբագրությամբ.

«7.10 Կատարողը պարտավոր է ապահովել ճանապարհային կահավորանքի, այդ թվում՝ նաև արգելափակոցների, վնասման դեպքերի հաշվառումը և ճանապարհային կահավորանքին պատճառված վնասների վերականգնումը՝ համաձայն 2010 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ աղյուսակով սահմանված պահանջների:
7.11 Կատարողը ճանապարհային կահավորանքին պատճառված վնասի վերականգնման համար կարող է փոխհատուցում պահանջել վնաս պատճառող ֆիզիկական կամ իրավաբանական անձից (այդ թվում՝ ապահովագրական ընկերությունից)»:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2020թ հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում են մինչև 2020թ դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2.3 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

**3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011012136
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղարին փոխարինող
Հ. Բատիկյան

/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«ԵՐԵՔ ԲՌՈՒՆՑՔ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան 7շ,,2բն.
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 205002226442
ՀՎՀՀ 01230857
տնօրեն
Հ. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հաստատված է
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1-3 գնման պայմանագրի
«20» «02» 2020թ. կնքված
Թիվ ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1-3/2020 Համաձայնագրով
Հավելված թիվ 1

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
**(2020 թ. իրականացվելիք)**

(ՀՀ դրամ)

| Հ/Հ | Աշխատանքի անվանումը | 2020թ | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | ՀՀ Լոռու Նալբանդի թունելի պահպանման աշխատանքներ | 8,008,875 | 8,008,875 | 8,008,875 | 8,008,875 | **32,035,500** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011012136
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղարին փոխարինող
Հ. Բատիկյան

/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«ԵՐԵՔ ԲՌՈՒՆՑՔ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան 7շ,,2բն.
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 205002226442
ՀՎՀՀ 01230857
տնօրեն
Հ. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հաստատված է

N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1-3 գնման պայմանագրի

«10» «02» 2020թ. կնքված

Թիվ ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1-3/2020 Համաձայնագրով

Հավելված թիվ 2

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**(2020 թ. իրականացվելիք)**

(ՀՀ դրամ)

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնման ենթակա աշխատանքների անվանումը | Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| 1 | ՀՀ Լոռու Նալբանդի թունելի պահպանման աշխատանքներ | - | 5,339,250 | 5,339,250 | 13,348,125 | 13,348,125 | 13,348,125 | 21,357,000 | 21,357,000 | 21,357,000 | 32,035,500 | 32,035,500 | 32,035,500 | **32,035,500** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,

ՀՀ կենտրոնական գանձապետարան

ՀՀ 900011012136

ՀՎՀՀ 02815457

գլխավոր քարտուղարին փոխարինող

Հ. Բատիկյան

/ստորագրություն/

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԵՐԵՔ ԲՌՈՒՆՑՔ» ՍՊԸ

ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան 7շ,,2բն.

«Ինեկոբանկ» ՓԲԸ

ՀՀ 205002226442

ՀՎՀՀ 01230857

տնօրեն

Հ. Հարությունյան

/ստորագրություն/

Կ.Տ.